

Ջայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կօպէկ,

Բժիշկ Միրիան Էանց

Վեան գաւառի համար 39.000 բուրձի փող և 2045 պուղ ու 200 չեթմիր ցորեն: Անդադար աշխատութեամբ կարճ միջոցում խնդրելով յիշեալ գումարներն ստանալու իրաւունքը, այնուհետ և սատիկ փութաշանութեամբ սկսեց թփփիւնի ցորեն և ալիւր ուղարկելը հարկաւոր տեղերի համար, և յոյս ունենալ, որ այդ ցորենը և ալիւրը տեղ համեմեց՝ մեր շուկաներում ևս հացի գինը բաւական կ'ըլլի:

Բացի այդ կառավարութիւնից խնդրած օգնութիւնները, պարոնի խնդրած թփփիւնի մէջ ստորագրութիւն է բացվել ազուրկի վաճառականների մէջ յօդուտ չբաւարներին և այժմ յաջողութեամբ շարունակուում է: Լրում ենք, որ մեծ պարտքը ժողովրդեան համար ամենայն կողմանէ դիւրացնել տալու համար և հոգում է այժմ մեր գաւառի մի քանի այլ կարեւորութիւններին մասին ևս, որոյ չարքամը զլիաւոր տեղն է բռնում ածուխի խնդիրը: Յայտնի է, որ փայտ կտրելու ածուխ այրելու համար հարկաւոր է իրաւունք և տոմսակ ստանալ անտառապետից վճարելով նորա համար նշանակեալ գումարը, և այնուհետև փայտ ու ածուխ պատրաստել և դուրս բերել ծախելու համար: Բայց անտառի վերակացուների և նոյն իսկ անտառապետի կամայականութեան և նորա բնակութեան հետաւորութիւնը (նա կենում է Զանգազորի կորիս գիւղում) այնտեղ են հասցրած, որ մի բեռ ածուխը այժմ մեր մէջ ծախվում է 6 բուրձի, այն ևս լաւ է, եթէ հարկաւոր ժամանակ գտնում էր, ուստի այս բաղէիս հացի խնդիրը ոչ պակաս նշանակութիւն է ստացել ածուխի և փայտի խնդիրը: Այժմ տեղեկանում ենք որ պարոնը խնդրած է տէրութեան 10.000 բեռ փայտ և 2000 բեռ ածուխի տոմսակ տալ ձրաբար մեր գաւառի համար: Այլ և ոչ պակաս գովասանաց արժանի է պարոնի աշխատութիւնը գաւառի համար: Սրբութեան մէջ մի օրինաւոր գեղատուն և մի հմուտ բժիշկ ունենալու մասին, որոց պակասութիւնը խիստ զգալի է մեզ համար:

Մի Ազգայնից

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Թիֆլիս, 5 դեկտ. 79

Ուղարկելով խմբագրութեանդ 5 բուրձի 30 կօպ հասուցանելու կամ «Արարատեան» ընկերութեան, կամ Վանայ սովելոց, որին առաւել հարկ կը համարէք, ցանկանում եմ մի քանի խօսք ևս յիշել: Հայաստանի քաղաքներում և գիւղերում տեղ տեղ կայ հետեւեալ գեղեցիկ սովորութիւնը, որ առհասարակ հրաւերքներում, սեղան նստած ժամանակ, առաջի բաժակները սկսում են դատարկել կայսեր, փոխադրայի, կաթողիկոսի կինաց, ազգիս հաստատութեանը, լրագրների յարատեւութեանը և այլն, և հետեւապէս հետաքրքրական խօսակցութիւններ են յառաջ գալիս յիշեալ թանկագին կեանքների բարեմաղթութիւններից՝ և որոնցից յղանում են օգտաւէտ մտքեր թէ բարոյապէս և թէ իրապէս: Բայց մեր քաղաքում այդ սովորութիւնը դժուար կը տեսնեն. մեր հրաւերքներում, առաջապետը՝ առաջի բաժակները կառաջարկէ որոշ որոշ դատարկել տանալու և ընտանեաց կենաց, երկրորդը՝ նոյնպէս որոշ որոշ ներկայ գտնվողներին, երրորդը՝ հեռաւոր բարեկամներին, չորրորդը՝ Նոյնը բաւական իւրաքանչիւրի ազգի մէջ որ ննջեցեալի անունը որ յիշեն՝ նորա հոգեթաւը պէտք է վայելեն, և ապա պարտապանաց... պրծաւ գնաց:

Սակայն մեր այն յետին ժողովրդական դասակարգի հասարակ, բայց համեստ ընթիլքում, որը պատրաստել էր ներկայ ամսին պ. Գրիգոր Մատթէոսանը, որտեղ Տէր Բաղդասար հայրը առաջի բաժակը առնելով ձեռքը բարեմաղթեց երկրի գլխութիւնը տաճկաբնակ սովատանջ հայերին և յառաջադիմութիւն «Արարատեան» ընկերութեան, և բոլորեքանք ցանկանալով մեր բարեմաղթութիւնը իրապէս լինելու, որի համար իւրաքանչիւրս սկսեցինք մեր ջնքին լուսն ձգել ազգային գանձանակը: Բաղդասար քահանայ Վաճառեանց 1 բ., Գրիգոր քահանայ Մանգալեանի 1 բ., Գրիգոր Մատթէոսան 1 բ., Գրիգոր Գալստեան Մարտիրոսեանց 1 բ., Եօվսեմ Աւետիքեան 50 կ., Նիկողայոս Սուլիանեանց 40 կ., Գապար Սուլիանեանց 20 կ., Գաբրիէլ Գաբրիէլեանց 20 կ., Ընդամենն 5 բ. 30 կ.: Էհ, ինչ արած, քանի որ մենք անհոգութեամբ տգիտութեան խաւարի մէջ կամաւ

ու բաց աչքով խարխալում ենք և երբէք չենք ուզում ուսման շոյսի օգտաւէտութեան ուշադրութիւն դարձնել, մեր նախապաշարմունքներով լի սովորութիւնները վերագոյնդ զաղաքակրթեալ եւրոպական ազգերից, չենք ուզում նորանցից օրինակ վեր առնել և նորանց հետեւել, սթափելով մեր դարաւոր ու մահադուշակ քնից, հեռաւորութիւն անելով ապագային՝ ջանալ բարեփոխում մեր ներկան, հաստատել քաղաքիս մէջ «Ազգային գանձարան» և պարտաւորել իւրաքանչիւր ընկերութեան (համբար) թէ քահանաների, թէ ծառայողների թէ վաճառականների, թէ արհեստագործների և այլն, ամեն տարի ժողովել իրանց մէջ ստորագրութեամբ ամեն մի հոգուց մի մի բուրձի: (Ինչ մեծ կամ դժուար բան, տարւոյ մէջ մարդագործ մի բուրձի ազգային գանձարանին ընծայելու) և յանձնել ազգային գանձարանին, և մէկ խօսքով ամեն մէկին մտածմունքը ամեն օգտաւէտ դէպքերի մէջ լինի միայն ազգային գանձարանի արհեստագործները, և որի ազնւամեքը հարկաւոր միջոցներում կարողանան գոհացուցիչ օգնութիւն հասցնել թէ «Արարատեան» ընկերութեան, թէ սովատանջից, թէ հրկիւղեց, թէ կառուցանելու հարկաւոր տեղերում ուսումնարաններ, և թէ ուրիշ հարկաւոր պէտքեր հոգալու, որով արդարեւ մեր ազգի ապահովութեանը մասնաւոր ծառայութիւն արած կը լինէինք, այլ ևս մի բուրձի խնայելու համար՝ չէինք կանգնի լսելու ու տեսնելու հայ ազգի աղէտակի թշուառութիւնները և յուսահատվել հայ անունը կրելու համար, հայ անուն առում եմ, որի կրող աշխարհակալ դիւցազները ազգերի պատմութեանց մէջ պատմելի փառաց յիշատակի անմահ արձաններ կանգնեցին, որը հիմա մենք մեր ժառանգութեամբ, անհոգութեամբ ու անհեռաւորութեամբ ուղում ենք նստեցնել այդ փառք կրող անուն շքեղութիւնը: Կան մեր ազգի մէջ շատ աւելորդ սովորութիւններ՝ եթէ օգտաւէտի փոխադրելին՝ որոց համադրում խիստ դժուար է, արդեօք ազգային գանձարան իւրաքանչիւր տարի որքան օգուտ պէտք է ստանալ, և որովհետեւ այս օգտաւէտ միջոցների վրա ուշադրութիւն չենք դարձնում, գոնէ մէկ մէկ հրաւերքների մէջ էլ նախապէս յիշեք մեր ազգը, բանանք մեր քաղաք, ձգենք մեր լուսն ազգային գանձանակի մէջ և ապա անխղճաբար ու գոհ սրտով վայելենք մեր խնջոյքը:

Գրիգոր քահանայ Մանգալեանի

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Բաղու, յունվարի 23

Բազու քաղաքում յօդուտ «Արարատեան» ընկերութեան ժողոված մէկ հազար հինգ հարկւր բուրձի պ. Տէր-Ռահմանի միջոցաւ հասուցանելով ձեզ («Մշակ» № 162, 79 թիւ), խոստացել էի հինգ հարկւր բուրձի ևս ժողովել, երկու հազարը լրացնելու համար: Բայց որովհետեւ Բազուի այժմեան անկեալ դրութիւնը չէ ներում շարունակել իմ յանձն առած պարտաւորութիւնը, վստահօրոյ այդ հինգ հարկւր բուրձին ուղարկում եմ ես, իմ սեփականութիւնից, ընդ նմին խնդրելով, խմբագրի տէր, բարեհաճէք նուիրատու պարոնների անունները տպել «Մշակ» համարներից մէկի մէջ, որը են. Նիկողայ Վարձիգուլեանց 150 բ., Ներսէս կրպակիկեանց 100 բ., Աբրահամ Սարուսեանց 50 բ., Սամուէլ Բաղդեանց 50 բ., Եղբարք Տէր-Ռահմանց 50 բ., Եղբարք Թումանեանց թարվիզեցի 50 բ., Եղբարք Սարգսեանց 35 բ., Մինաս Արիկեանց 35 բ., Գրիգոր Թումանեանց 35 բ., Ազգ. քահանայ Աղամեանց 30 բ., Յովհաննէս Չախմաստեանց 25 բ., Գրիգոր Շահինգանեանց 25 բ., Աւարիկ Ծատուրեանց 25 բ., Յակովբ Աւետեանց 25 բ., Նիկողայ Սարգսեանց 25 բ., Եղբարք Գրիգորեանց 25 բ., Աբրահամ Վէրմիշեանց 25 բ., Եղբարք Բուդաբեանց 25 բ., Եղբարք Գալմիշեանց 25 բ., Եղբարք Ժամհարեանց 25 բ., Յարէլ Տէր-Յակովբեանց 25 բ., Ազգ. քահանայ Տէր-Յակովբեանց 25 բ., Բէկլար Մանուկեանց 25 բ., Գաբրիէլ Ալիբէկեանց 25 բ., Եղբարք Աղամեանց բաղուցիք 25 բ., Ոսկան Խաչատրեանց 25 բ., Միկիտ Վարդանեանց 25 բ., Կանտորա Մեկեանց և ընկերութիւն 25 բ., Եղբարք Լիանջովի 25 բ., Յովսէփ Թումանեանց 25 բ., Խրիստափոր Գրիգորեանց (պ. ձգնաւորներից) ձեռամբ Յարիցիկից) 25 բ., Գրիգոր Ալիբէկեանց 25 բ., Աղաւել Յովսէփեանց 25 բ., Միկիտ Շահինգանեանց 25 բ., Բուդաբեանց Միկիկեանց 25 բ., Յակովբ Ապրիսեանց 25 բ., Յովսէփ Օրբելանից 25 բ., Աղաւան և Ստեփան Յօսանեանց 20 բ.,

Միլզաւան Միրզաբէկեան 20 բ., Նազար Շահնազարեանց 20 բ., Մկրտիչ Պատուականեանց 15 բ., Խարայէլ Բէգլարեանց 10 բ., Ազգ. քահանայ Խաչիկեան 10 բ., Մկրտիչ Ազգ. քահանայ 10 բ., Գրիգոր Աղամեանց 10 բ., Յովհաննէս Վասաբեանց 10 բ., Երիտասարդ ուն 10 բ., Աւարիկ Բուդաբեանց 10 բ., Եղբարք Եղբարմիշեանց 10 բ., Սողոմոն Տէր-Ստեփանեանց 10 բ., Եսայի Պօպովեանց 10 բ., Ստեփան Թաթումեանց 10 բ., Թովմաս Ամիրեանց 10 բ., Սիմէոն Վազարով 5 բ., Գասպար Բաղամեանց 5 բ., Խօսրով Դանիէլեանց 5 բ., Հայրապետ Հախումեան 5 բ., Ալեքսէյ Բարտաշեանց 5 բ., Նիկողայ Ղուկիանց 3 բ., Աղաւան Թումանեանց 2 բ., Պօղոս Խանդավրեանց 3 բ., Մկրտիչ ձառնաւեանց 3 բ., Արտէմ Բաղդեանց 3 բ., Զաւաղ Աղամեանց 2 բ., Միլզաւել Բինիկեանց 2 բ., Սամսոն Չէրքիզեանց 1 բ., Յովսէփ Պանիշեանց 1 բ., և Յովհաննէս Վարձիգուլեանց 500 բ., ընդամենը 2000 բուրձի: Այս գումարը մէջ է 500 բուրձի իմ վճարածն, մշտնջենաւոր անդամութեան համար:

Յովհաննէս Վարձիգուլեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԱՆԱՆՈՒՄԱՅԻՆ մեզ գրում են: «Մեր ինտելիգենցիայի մի ընտիր խումբ արդէն պատրաստի ունեւում հարկաւոր գումարը մտադիր է շուտով բաց անել մի օրինորդական ուսումնարան, որի պրօգրամման կը լինի տեսական կողմից միայն սովորեցնել գրել և և կարգաւ, իսկ գործնական կողմից կատարելագործել կանայն արհեստների մէջ, որոնցով կարելի կը լինի արհեստ մատակարարել ոչ միայն իրանց սեփական պիտոյքը, այլ և արդիւնահանել և շրջակայ տեղերի պիտոյքը, ինչպէս, օրինակ, Աշարիայի կանաց և մարդկերանց հագնող շորեղէնները»:

Մեզ հաղորդում են ԱՆԱՆՈՒՄԱՅԻՆ և հետեւեալը: «Տեղական մանկավարժներից շատերը համոզվում են, որ այժմեան պրօգրամմայով Ախալցխայի օրինորդական ուսումնարանում գործը առաջ տանելը օրից օր դժուարանում է, որովհետեւ շատերը ծնողներից նկատելով որ իրանց աղջիկները ուսումնարան մտնելու օրից այլ ևս սառչում են դէպի տնային գործերը, — կամ սկսում են հանդուրժել իրանց աղջիկներին, կամ թէ չէ, հէնց սկզբից չեն վստահանում ուղարկել նրանց դպրոց»:

Գուրս ևկաւ մամուլի տակից մի բառգրքով ուսուց լեզուից ի հայոց լեզու, աշխատասիրութիւն Գ. Հախագատեանցի: Գրքը բաղկացած է մօտ 700 երեսից: Ծանփում է ԹԻՖԼԻՍԻ Չաքարիա Գրիգորեանցի, Վարդանեանցի և Կենտրոնական գրախաւառանոցներում: Գինն է Թիֆլիսում 1 բ. 30 կ., իսկ ուրիշ քաղաքների համար 1 բ. 50 կ.: Գումարով առնողներին զիջում կը լինի:

ՎԱՂԱՐՇԱՊԱՍՏԻՑ մի պարոն գրում է մեզ. «Ներկայ տարվայ առաջին համարում «Մշակ» ֆելիետոնները յիշում է թէ ձեր լրագրի մէջ տեղաված է եղել փախստութեանը դիւրական ընկերութիւնների կանոնադրութիւնը, ցանկանալով այդպիսի մի կանոնադրութիւն ունենալ, բարեհաճէք ուղարկել ինձ «Մշակ» համարը, որի մէջ տպված է նաւ Մենք պարտաւորութիւն ենք համարում յայտնել պարոնին, որ այդ ընկերութիւնների մանրամասն կանոնադրութիւնը, ինչպէս նա վաւերացրած է մինիստրութեանը, տպված է եղել «Մշակ» մէջ, հայոց թարգմանութեամբ, 1873 թիւն, № 10 և 11 մէջ: Խմբագրութեան մէջ գրանցելով այդ հիմ համարները, ուղարկեցիք պարոնին:

Հինգաբլի, փետրվարի 7-ին ուսուց սիրողների ներկայացումն, որ պէտք է լինէր Արժուտութեան թատրոնում, յետ զգվեցաւ սիրողներից միմի հիւանդութեան պատճառով:

Կիրակի օր, փետրվարի 10-ին Արժուտութեան թատրոնում լինելու Սլավոնսկու կոնցերտի ժամա-

նակ երգեցողութեան հետ միացրած կը լինեն կենդանի պատկերներ:

ՄԵՆՎԱՐԱՔԻՍ գիւղից մեզ գրում են, որ փետրվարի 1-ին աւազակները գիւղերով կոտորեցին Յ. Արդեանցի տունը և տարան բաւական փող, ոսկեղէն, արծաթեղէն և այլ գանգաւան իրեղէններ, Աւազակները յայտնի չեն: Նոյնպէս և անցեալ ամսին անյայտ աւազակներ թալանեցին մի դարաքիւնեցուն և տարան նրանից 1700 բուրձ:

Մեզ գրում են ՄԵՆՎԱՐԱՔԻՍԻՆ հետեւեալը. «Մի քանի դարաքիւնեցի կանայք, չբաւոր և որը օրինորդներին ուսման գործի մէջ օգնելու նպատակով, մի ընկերութիւն կազմեցին, ամսական մի որոշ տուրքով: Անդամակների թիւը հասել է 30-ի և շարունակում է աճել: Ընկերութեանը օգնում են նոյնպէս և կողմնակի մարդիկ: Պ. Խ. Արդեանց 20 բուրձ արժողութեամբ մի պատի ժամացոյց ընծայեց Վարաքիսի օրինորդական դպրոցին»:

Մեզ խնդրում են տպել հետեւեալ ՄԵՆՎԱՐԱՔԻՍԻՆ. «Այստեղ ստացվեցաւ «Արարատեան» ընկերութեան 1878—79 թիւ Տեղեկագիրը, որի մէջ ոչ մի երեսում չը կար դարաքիւնեցի Վազար Աղաբաբեանցի 100 բուրձ նուէրը: Նուիրատուն ցանկանում է այդ գանգաւորեան պատճառն իմանալ»:

Փետրվարի 7-ին եղանակը ԹԻՖԼԻՍԻՍԻՍ կրկին ցրեց:

«Մեղու Հայաստանի տպել է և «Օճօր» լրագիրը արտատպել է մի տեղեկութիւն Վարաքիսի անտառապետի գործի մասին, իբր թէ Թիֆլիսիցներից մի քանիսները հրաժարվեցին, ասելով որ երբէք ոչինչ չեն հաղորդել «Մշակ»ին: Այդ չափ զարմացում է, որովհետեւ մենք պահած ունենք խմբագրութեան մէջ այն նամակը, որի տակ այն բոլոր պարոնները ստորագրել են, որոնք յանձն էին առնում պատասխանատւութիւն անտառապետի մասին գրված տեղեկութիւնների վերաբերութեամբ:

ԱՆԻՔԱՆԻՐԱՊՈՒՅԳ գրում են. «Եկեպոտատների նախազանութեամբ կազմված ժողովը, որը վճռել էր քաղաքի նշանաւոր դրամատէրներից հանգանակութեամբ հաւաքել մի յայտնի դրամադուրս ալիւր առնելու և տեղոյս չբաւոր ընտանիքներին անդրադարձաբար բաժանելու համար, չը յաջողվեցաւ: Մասնաժողովը չը կամեցաւ ծանաբանել այս պարտականութեամբ միայն դրամատէրներին: Նրանք տուեցին հանգանակութեանը ընդհանրական իրաւորութիւն, և ամեն փողը ի շատն ունեւոր քաղաքացի պարտաւորվեցաւ ձգել իր լուսնին և պատասխանատու լինելու գահ ձառանի մէջ: Արդէն հաւաքված է 15,000 բուրձի, որով մասնաժողովը անդամները պէտք է գնեն ալիւր և փոխադարձաբար պէտք է բաժանեն չբաւոր ընտանիքներին»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՆ

ԹԻՖԼԻՍ

«Полосы» լրագրի Կ. Պօլի թղթակիցը գրում է հետեւեալը. «Հայերը իրանց կողմից ամեն միջոցներ գործ են դնում հումանիտար Բ. Իրան, որ նա կատարի Բերլինի դաշնագրի 61-որդ յօդուածը և այս օրերս իրանց բոլոր լրագիրներում շատ համոզիչ հրաւերներ են տպում դէպի Ներսիս. այս պատճառով անցեալ օրը տպագրութեան բաժնի գլխաւոր խիստ յանդիմանական թուղթ ուղարկեց Հայերին, ասելով որ կանգնեցնեն իրանց գանգաւանները և այս խնդրի վրա շարունակվող ամեն տեսակ բանակովի վերջ դնեն: Բայց անկարգութիւնները այնուամենայնիւ շարունակվում են Հայաստանում և քուրդերը

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

Մամուլի տակից դուրս են եկել և վաճառվում են Կենտրոնական Գրավաձուռնոցում հետևեալ գրքերը:

Մանկական երգեր Գառնու-Գաթիկայի, կազմած	—	ր.	25	կ.
— նոյնը անկազմ	—	»	15	կ.
Թաւառազ մեղու պատկերազարդ, կազմած Թարգ. օր Ն. Տէր-				
Մարկոսեանի	—	»	40	կ.
Կարմիր լապտեր պատկերազարդ և կազմած, Թարգ. օր Ն. Տէր-				
Մարկոսեանի	—	»	50	կ.
— նոյնը առանց կազմի	—	»	30	կ.
Վ. Կեր. Յ. Գրիգորեանցի	—	»	60	կ.
Պէպո. կոմեդիա երեք արարվածով, հեղ. Գ. Սուքուրեանի	—	»	30	կ.
Մօրեա կամ աշխատութիւն, հեղ. Տ. Գառնու-Թարգմ. Գաղիկերէնից	1	»	—	կ.
Խորհրդաւոր կղզի, հեղ. Ժ. Վերն 3 հ. Թարգ. Գաղիկերէնից	4	»	—	կ.
Դիւանաւոր բլուր. հեղ. Էօթէն Սիւ 2 հ. Թարգ. Գաղիկերէնից	2	»	75	կ.
Պատանեկան ներշնչումներ, հեղ. Հրաւտ Յաստուրի	—	»	60	կ.
Սահմանադրութիւն և հայ ժողովուրդն Հր. Սաստուր	—	»	35	կ.
Մի կաթիլ արտօր, զոր կը հեղու. Սիսակ հայ մոկերին վրայ	—	»	35	կ.
Բօք զհայրենեաց հեղ. Վ. Վ. Պարտիգալիցի	—	»	70	կ.
Թորոս աղբար Հայաստանի ճամբորդ հեղ. Սրուանձեանց	1	»	25	կ.
Մանանայ Նոր հեղինակի	1	»	75	կ.
Սիրաք և Սամուէլ բարի հօր կրթական դասեր, հեղ. Բրիմիան Հայրիկ	1	»	45	կ.
Մարգարիտ արքայութեան երկնից, նոյն հեղ.	—	»	75	կ.
Վանգուժ. կուժ մի ջուր իւր այրած հայրենեաց վերայ կ'սրսկէ Բրի-				
մեան հայրիկ	—	»	20	կ.
Թէ ինչ շահեցանք Բերլինի վեհաժողովէն, հեղ. Մ. Չերազի	—	»	40	կ.
Հայաստան և Իտալիայ նոյն հեղ.	—	»	60	կ.
Սամուէլ Մուրատեանի կտակի խնդիրը, դասախօսութիւն Ս. Ար-				
ծրունու	—	»	50	կ.

Հրատարակութիւն Գարմայր Մանեանի				
Փարոս Հայաստանի, պատկերազարդ հանդէս	1	»	—	կ.
Եղբայր և քոյր Գերմանական վէպ. պատկերազարդ	—	»	30	կ.
Արքայադուռոր Գերմանական վէպ. պատկերազարդ	—	»	35	կ.
Հիւսիսային ձեռքեր Անգլիական վէպ. պատկերազարդ	—	»	10	կ.
Իշխան Բէհրուժեանի Հրատարակութիւններ				
Վ. Երբ իմ վեճեր, Ֆարս երեք պատկերով Մ. Տ. Գ.	—	»	40	կ.
Բեքեր բիճու հանաքը. Օպերետա մի գործողութեամբ	—	»	25	կ.
Աշնանային երկնի գեղեցիկ, փոքրիկ մէկ արարուածով	—	»	25	կ.
Բռնի ամենատեղիւն. կոմեդիայ մէկ արարուածով	—	»	40	կ.
Ժանո և Ժանէտ, օպերա-փոքրիկ, մէկ գործողութեամբ	—	»	40	կ.
Պառանքներ խրատ. փոքրիկ մէկ արարվածով Մ. Տ. Գ.	—	»	50	կ.
Տիկինը նրան սպասում է, կատակ երգութիւն մէկ արա-				
րուածով	—	»	30	կ.
Անանու կտակ. կատակերգութիւն մէկ արարուածով	—	»	40	կ.
Փակուած դրան մօտ. պատկերամենախօսութիւն	—	»	30	կ.

Նոյն տեղը վաճառվում են ամենայն տեսակի դաստիարակող հայերէն, Ռուսերէն և օտար լեզուների, դասական պիտոյքներ ուսումնարանների և աշակերտների համար. Հայերէն, Ռուսերէն և Գաղիկերէն վիպասանութիւններ, ամենայն հասակի ընթերցանութեան և դիտու-թեան գանալան ճիւղերին վերաբերեալ գրքեր. պատուէրները կատարվում են ամենայն արա-գութեամբ: Ստորագրադրացիք իրանց պահանջները պէտք է ուղարկեն հետևեալ հասցեով Вѣ Тифлисѣ. Вѣ Центральную книжную торговлю



Կիրակի, յունվարի 27-ից սկսած, Գոռնիբեան փողոցի վրա, ցիրկի մօտ գտնված բալագանի մէջ կը ներկայացնուի հասարակութեանը երբեք այստեղ չը տեսնված երևոյթ, այն է ԵՒՐՕՊԱՅԻ ԵՌԱՆԻ ՀԱՅԿԱՅ ՕՐԻՈՐԴ ԱՄԱԼԻԱ և աշխարհի ամենափոքր ԿԱՐԼԻՆՍԿԻ ՄԱՐԿԻՑ ՀԵՆՐԻԽ ՎՕԼԳԻ և ՄԱՐԿԻՑՈՒՅԻ ԼՈՒԻՑԷ ՏԵՂԵՐԻ գները՝ առաջին տեղեր 50 կոպէկ, երկրորդ 30 կոպէկ: Երեւանները կէսն են վաճարում:

Իժիկ Բ. Նաւասարդեանի «Գիթտերիտ» կամ «փողացաւ» գրքովը վաճառվում է հեղինակի մօտ քաղաքային հիւանդանոցում, Կենդրոնական գրալաձառնոցում և Օ. Գրիգորեանցի Կոկասեան գրալաձառնոցում: Գինն է 25 կոպ'կ— բարեգործական նպատակով:

Բերլինի ակտի մի տի Ինժեներ Կ. Կ. Կել-լինգ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ է ամեն տեսակ ՊԼԱՆՆԵՐ և զանազան ԾԻՆՈՒԹԻՒՆՆԵՐ է անձն առնում: Հասցէն Վարանցոյսկայա Նաբերժնայա, № 4, ՎԵՐԻՆ ՅԱՐԿՈՒՄ:

Մի ՕՐԻՈՐԴ ՎԱՐԺՈՒՅԻ, որ ուսուցչուհու ՎԱՅՏԱԿԱՆ ունի, ՆՈՐ է ԵԿԷԼ ՓԱՐԻՅԻՑ և հիմնադրապէս իմանում է ՌՈՒՍԵՐԵՆ, ՖԷՐՐԱՆՍԵՐԵՆ, ԳԵՐՄԱՆԵՐԵՆ, ԱՆԴԼԻԵՐԵՆ և ԻՏԱԼԵՐԵՆ լեզուները, նոյնպէս ԵՐԱԺՏՈՒԹԻՒՆ և ԵՐԿՆՅՈՒԹԻՒՆ. փնտռում է ԳԱՍԵՐ կամ վարժուհու ՊԱՇՏՈՆ: Հասցէն. Առամանկայա փողոց, ՋՈՒՐԱՅԻՍԿԻ ՏՈՒՆ, առաջին յարկում Սեմիարիայի հանդէպ, Բրոքսիու բնակարանում:

ՆԵՐԱՅ 1880 ԹԻՈՒՄ ԿԸ ՏՊԱԳՐՎԻ
„ԿԱՅԾԵՐ“

ՎԷՊ ՏԱՃԿԱՍՏԱՆԻ ՀԱՅՈՑ ԿԵԱՆՔԻՑ
Հեղինակութիւն ԲԱՅԳԻ

Վէպը բաղկացած կը լինի երկու առանձին հատորներից իւրաքանչիւրը կը բովանդակէ մօտաւորապէս 400 տպագրված էրես-ներ: ԸՄՆ մէկ հատորի գինն է 1 ր. 50 կ., իսկ միասին 3 ր.: Մէկ հատորի համար առանձին ստորագրութիւն չէ ընդունվում: Ստորագրվել կարելի է ԳԵՐՄԱՆԵՐՈՒՄ այն պարոնների մօտ, որոնք բարեհաճել են բաժանորդներ հաւաքել «ԿԱՅԾԵՐ» տպագրութեան համար, իսկ ԹԻՖԼԻՍՈՒՄ պէտք է գիւնել «ՄԵՂԱԿԻ» խմբագրատանը Յ. ՄԵԼԻՔ-ՅԵԿԻՄԵԱՆԻՆ:

ՀԱՅՏԱՐԱՐ դատարանի 4 բաժնի դատա-տանտան ՊՐԻՍՏԱՎ ՎԱՍԻԼԵՆԿՈ քաղաքային օրէնսդրութեան 1030 յօդուածի համեմատ յայտնում է, որ ՓԵՏՐՎԱՐԻ 16-ին առաւ-տեան 10 ժամին, Երևանեան հրապարակի վրա, Թամաշեզի քաղաքային մօտ, պոլի-ցիական վարչութեան հանդէպ ԱՃՈՒԳՈՎ ՎԷ ԾԱԽՎԻ ԱՅՐԻ Է ՓԵՄԻՍ ՄԱՅԻՍ ՍՈՒՐՈՎԻ շարժական ԿԱՅՔԸ, որ բաղ-կացած է զանազան կահ կարասիքից, պա-հարաններից, բուքէտից և այլն և որ գնա-հատված է 148 ր.: ԱՅՐԻ ՄԱՅԻՍՈՒՐՈՎԻ կալը ծախվում է Ստեպան Պոմպուլի 1880 թ. ՊԱՐՏԻ և 1876 թ. Սեպտեմբերի 14-ից սկսած պարտքի ՏՈՎՈՒՄ և դատա-տանական ծախս 120 ր. ՁԷ ՎԱՐՆԻՈՒ Հա-մար:

ՆԻՎՈԼԱՅԵՍԻՍԻ ԱՐԲՈՒՆԱԿԱՆ ՌՈՒՍԱՅ ՈՒ-ՍՈՒՄԵԱՐԱՆԻ ՀԱՄԱՐ հարկաւոր է ՎԱՐ-ՉԵԼ չորս մեծ և չորս միջակ սենեակներ մեծ բալով, հաւաքարում, աւելի ՊՕԿՐՈՎԱԿ ԿԱՅԱՐՄԻ մօտերում:

Այդպիսի շինութիւն ունեցողներին խն-դում եմ շնորհ բերել լիշեալ ուսումնարանը, ՊՕԿՐՈՎԱԿ ԿԱՅԱՐՄԻ ԳԻՄԱՅ, և խօսակցել պայմանների մասին ուսումնարանի տեսչի հետ, ամենայն օր ճաշից յետոյ 3 ժամից մինչև 7 ժամը երեկոյան:

ՄԻ ՀԱՅ ՕՐԻՈՐԴ, որ աւտօմոլ է իւր ու-սումն Ս. ՊԵՏԵՐԲՈՐԴԻ օրինորդաց ԳԻՄԱ-ՋԻՆԵՐԻՑ միջի մէջ, ցանկանում է վարժու-հու պաշտօն ստանալ Կովկասի ՀԱՅՈՑ ՈՒ-ՍՈՒՄԵԱՐԱՆԵՐՈՒՄ: Պայմանները խնդրեմք ուղարկել հետևեալ հասցեի. С. Петер-бургъ, Новая улица, домъ № 14 кв. № 10 Хр. Ив. Іоану.

С. ПЕТЕРБУРСКІЙ ПОРТНОЙ
ГЕРМАНЪ
ОБРАТИТЕ ВНИМАНИЕ
Имѣю честь извѣстить почтеннѣйшую публику что нынѣ мой магазинъ и мастерская находятся на Гановской улицѣ на противъ дома Хосроева въ новомъ устройствѣ Шахъ-Назарова только что получено большой выборъ осенней и лѣтней Англійской и Французской мате-ріи и также принимаюся заказы воен-ныхъ и гражданскихъ костюмовъ по умѣреннымъ цѣнамъ.

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԻ
1. Երգն կեանց քահանայ—Մանկա-կան երգարան, երգեր և պարերգեր ընդունված է Ներսիսեան և Գայանեան դպրոցներում: Գինն է . . . — ր. 20 կ.
2. Մեծատունեանց—Նրբարան աղջ-կանց և աշակերտուհեաց Հայկական ու-սումնարանաց 1 ր. — կ.
3. Բժիշկ Բ. Նաւասարդեանց—Գիթտերիտ բողազացաւ 1 ր. 25 կ.
4. Բժիշկ Գ. Տէր-Գրիգորեանց—Վա-րակիչ հիւանդութիւններ
(Ծաղիկ, կարմուկ, սկարաւին, բժաւոր օրֆ, անդադարձ տենդ, դիֆտերիտ, ընդ-հատ տենդ, խօլերայ, դեղին տենդ, որովայ-նատիֆ և ժանտախտ):
Սոցա յատկութիւններն, ծագման և տա-րածման եղանակներն և նախապաշտպանո-ղական միջոցներ:

Վաճառվում են Զ. Գրիգորեանցի Կովկա-սեան գրավաձառնոցում:

Հանուկ բարվանսարան այր-վելուց յետ, նորից բացված է իս-տակ մօմի առևտուր Սիմեան փո-ղոցում Ըրծրունու բարվանսարա-յումը № 14. Իւրաքանչիւր շաբաթ ստացվում է նոր շինուած խտակ մօմեր իմ սեփական զաւօղից և որոնք վաճառվում են էժան գնե-րով. խնդրեմ գնողներին չը թող-նել իրենց այցելութիւնները:
Յովանէս Կուրճեան
1—4

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ յայտնում է, որ ՌՈՒՍԱՅ ԲԱՅԱՐԻ և ՀԱԻԼԱ-ԲԱՐԻ ՀՐԱՊԱՐԱԿԻ վրա կառուցված են Ա-ՌԵԻՏԻԱԿԱՆ ԾԻՆՈՒԹԻՒՆՆԵՐ վարձով տալու համար. ուսացա քաղաքի վրա 18 համարներ և հաւաքարի հրապարակի վրա 40: Յիշեալ շինութիւնները ՎԱՐՉՈՎ վերցնել ՅԱՆԱՅՈՎՆԵՐԸ հրաւիրվում են քաղաքային վարչու-թիւնը, որի ԳՐԱՍԵՆԱԿՈՒՄ ամենայն օր, բացի տօն օրերից, առաւօտեան 10 մինչև 2 ժամը երեկոյան վարձի ՊԱՅՄԱՆԵՐԸ կը յայ-տնվեն:

2. Գրիգորեանցի «Կովկասեան գրավաձառ-նոցում ծախվում են»
1. Գալիկեան. Ա.—բաղիբը Հայ-գաղ-ղիարէն: Dictionnaire Armenien Francais. Գինն է 6 ր.
2. Գալիկեան. Ա.—Հայկական գեղա-գրութիւն, Գինն է 1 ր.
3. Մեծատունեանց (Եղիշ վարժպետ) —Նրբարան աղջկանց և աշակերտուհեաց հայկական ուսումնարանաց: Հատ. ա. Գինն է 1 ր.